ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ---------- 2026 թվականի №----Ա

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Վագրամ Հիմնադրամ» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) լիազորված անձ Շուշանիկ Թառոյանը 2026 թվականի մայիսի 12-ի գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ 2025 թվականի դեկտեմբերի 25-ին «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) և Հիմնադրամի միջև կնքվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման №02115425 միացման պայմանագիրը, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրի կնքման պահից սկսած 60 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 6-րդ փողոց 1-ին նրբանցք №7/1 հասցեի՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացումը: Լիազորված անձը գրությամբ նշել է նաև, որ Հիմնադրամը պատշաճ կերպով փոխանցել է միացման վճարը, սակայն միացման պայմանագրով ստանձնած նոր միացման աշխատանքները սահմանված ժամկետում չեն իրականացվել, իսկ Հիմնադրամի 2026 թվականի ապրիլի 10-ի գրությանն ի պատասխան՝ Ընկերությունը հայտնել է, որ արդեն իսկ ստացել է շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն և աշխատանքները կկատարվեն հինգ աշխատանքային օրվա ընթացքում, որից հետո կներկայացվի օբյեկտի

շահագործման հանձնման ակտը, սակայն, նույնիսկ Ընկերության կողմից խոստացված լրացուցիչ ժամկետում որևէ աշխատանքներ չեն կատարվել.

բ) Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378-Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 49-րդ կետի համաձայն՝ մատակարարը նոր միացման աշխատանքների ավարտից հետո, այդ մասին ծանուցում է դիմող անձին՝ ծանուցման մեջ նշելով նոր միացման աշխատանքների ավարտի ամսաթիվը, ինչպես նաև՝ պայմանագրի կնքման համար կանոնների համաձայն ակցեպտ և պահանջվող փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին: Ընդ որում, միացման պայմանագրի կնքման, իսկ կանոնների 47-րդ կետի համաձայն՝ միացման պայմանագրի փոփոխման դեպքում՝ փոփոխման պահից մինչև սույն կետին համապատասխան ծանուցում ներկայացնելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 60 աշխատանքային օրը, իսկ եթե նոր համակարգի ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգերից մեկի երկարությունը առանձին վերցված գերազանցում է 500 մետրը և (կամ) անհրաժեշտ է կառուցել պոմպակայան՝ 120 աշխատանքային օրը.

գ) հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 26-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կանոնների 49-րդ կետով սահմանված պահանջի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 26-ի №ԿՍ/34.3-Մ4-6/3393-2026 գրությամբ.

դ) Ընկերությունը 2026 թվականի մայիսի 27-ի №ՄՇ/17723, հունիսի 22-ի №ՄՇ/21559 գրություններով ներկայացված պարզաբանումներով և վարչական վարույթի շրջանակում ներկայացված 2026 թվականի օգոստոսի 7-ի №ՄՇ/24279 գրությամբ հայտնել է, որ Հիմնադրամի լիազոր ներկայացուցիչ Շուշանիկ Թառոյանի կողմից 2025 թվականի նոյեմբերի 17-ին ստացված դիմումի հիման վրա Ընկերությունը կազմել է տեխնիկական պայման և 2025 թվականի դեկտեմբերի 25-ին Հիմնադրամին է ներկայացրել միացման պայմանագիր կնքելու առաջարկ, որի

ընդունման արդյունքում՝ 2026 թվականի հունվարի 22-ին կնքված է համարվել №02115425 միացման պայմանագիրը: Միացման պայմանագրի շրջանակում Ընկերությունը 2026 թվականի փետրվարի 3-ին դիմել է շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն ստանալու համար և 2026 թվականի ապրիլի 8-ին վերջինիս տրամադրվել է նոր համակարգ կառուցելու համար թիվ ՀՇԹԴ/9/916-2026 շինարարական աշխատանքների կատարման թույլտվությունը՝ 2026 թվականի ապրիլի 10-ից մինչև մայիսի 5-ը ժամանակահատվածի համար, ինչի մասին Ընկերությունը տեղեկացրել է Հիմնադրամին և հայտնել, որ միացման պայմանագրի շրջանակում նախատեսված աշխատանքները կկատարվեն հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Միևնույն ժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ նշված ժամանակահատվածում կապալառու շինարարական կազմակերպության աշխատանքներին էապես խոչընդոտել են բնակիչները, ինչի արդյունքում կապալառու կազմակերպության աշխատակիցները չեն կարողացել մուտք գործել տարածք և կատարել միացման պայմանագրի շրջանակում նախագծով հաստատված շինարարական աշխատանքները, կապալառու կազմակերպությունը ոստիկանություն չի դիմել, փորձել է բանակցել բնակիչների հետ և ստեղծված իրավիճակի մասին տեղեկացրել է Ընկերությանը: 2026 թվականի մայիսի 7-ին Ընկերություն է դիմել Հիմնադրամի լիազոր ներկայացուցիչ Շուշանիկ Թառոյանը՝ ներկայացնելով պարտավորությունների հրատապ կատարման կամ վճարված գումարի վերադարձման վերաբերյալ պահանջագիր, ուստի, հաշվի առնելով, որ թիվ ՀՇԹԴ/9/916-2026 շինարարական աշխատանքների կատարման թույլտվության ժամկետը լրացել է և միացման պայմանագրի շրջանակում աշխատանքների կատարման նպատակով Ընկերությունը կրկին պետք է դիմեր շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն ստանալու համար, իսկ Հիմնադրամը պահանջում էր պարտավորությունների հրատապ կատարում կամ վճարված գումարի վերադարձ, Ընկերությունը 2026 թվականի մայիսի 15-ի №ՄՇ/15604 գրությամբ Հիմնադրամին է ներկայացրել կնքված միացման պայմանագիրը լուծելու մասին №04/2026 համաձայնագիրը.

ե) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կանոնների 49-րդ կետի պահանջը, այն է՝ Հիմնադրամի և Ընկերության միջև 2026 թվականի հունվարի 22-ին կնքված №02115425 միացման պայմանագրի

կնքումից հետո 60 աշխատանքային օրվա ընթացքում չի ավարտել նոր միացման աշխատանքները և այդ մասին չի ծանուցել դիմողին: Ինչ վերաբերում է Ընկերության այն փաստարկին, որ կապալառու շինարարական կազմակերպության աշխատանքներին էապես խոչընդոտել են բնակիչները, ինչի արդյունքում կապալառու կազմակերպության աշխատակիցները չեն կարողացել կատարել միացման պայմանագրի շրջանակում նախատեսված շինարարական աշխատանքները, ապա այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ Ընկերությանը պատասխանատվությունից ազատելու համար, քանի որ ներկայացված պատճառաբանությունները հիմնավորված չեն, չեն բխում գործող իրավակարգավորումներից և դրանցով որևէ կերպ չի հերքվել խախտումների առկայության հանգամանքը: Մասնավորապես, Ընկերությունն ինքն է նշել, որ ստեղծված իրավիճակում կապալառու կազմակերպությունը ոստիկանություն չի դիմել և նշված իրավիճակի մասին տեղեկացրել է Ընկերությանը, իսկ վերջինիս կողմից իրավիճակը շտկելու ուղղությամբ որևէ գործողություն ձեռնարկված լինելու վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել: Ավելին՝ Ընկերությունը հայտնել է, որ նպատակահարմար է գտել Հիմնադրամի լիազոր ներկայացուցչի՝ պարտավորությունների հրատապ կատարման կամ վճարված գումարի վերադարձման վերաբերյալ պահանջագիրը ստանալուց հետո միացման պայմանագիրը լուծելու վերաբերյալ համաձայնագրի առաջարկ ներկայացնել Հիմնադրամին, մինչդեռ նշվածը դեռևս չի վկայում Ընկերության՝ պայմանագրով և Կանոններով սահմանված պարտավորությունների դադարման մասին՝ հաշվի առնելով, որ Հիմնադրամի և Ընկերության միջև կնքված միացման պայմանագիրը փաստացի լուծված լինելը վկայող ապացույցներ Ընկերության կողմից չեն ներկայացվել: Այսպիսով՝ ներկայացված պարզաբանումներով չի հիմնավորվել խախտման բացակայության հանգամանքը, ինչպես նաև նշված խախտման՝ ֆորս մաժորի հետևանք լինելը, այն է՝ առկա են եղել անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք առաջացել են իր կամքից անկախ, խոչընդոտել են իր գործունեությանը կամ հանգեցրել համապատասխան պարտավորությունների չկատարմանը՝ հակառակ իր գործադրած ջանքերի, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի

փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ընկերությանը՝

   ա. Կանոնների 49-րդ կետով սահմանված պահանջի խախտման համար նախազգուշացնել,

   բ. սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից 60-օրյա ժամկետում ավարտել №02115425 միացման պայմանագրով ստանձնած՝ Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Նորքի 6-րդ փողոցի 1-ին նրբանցքի №7/1 հասցեի նոր միացման աշխատանքները, դրանց ավարտի մասին ծանուցել դիմողին և համապատասխան տեղեկատվություն տրամադրել Հանձնաժողովին:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

-- 2026թ.
բ. Երևան